

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՈԳԱ ԿԵՆՏՐՈՆԻ 2021 թ. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ

2021 թ. ՈԳԱ կենտրոնի կողմից աշխատանք է տարվել հետևյալ ուղղություններով.

1. Բուհի կառավարման որակի գնահատում
2. ՄԿԾ-ների որակի ապահովում և գնահատում:

ՈԳԱ կենտրոնը 2021 թ. բուհի կառավարման որակի ապահովման և գնահատման նպատակով՝

- լրամշակել է ՀԱԱՀ 2020-2024թթ. ռազմավարական պլանի ԳԱՑ-երի եռաստիճան ամբողջական փաթեթը՝ ըստ ՌՊ նպատակների, խնդիրների և գործողությունների,
- իրականացրել է ՀԱԱՀ 2020-2024 թթ. ռազմավարական պլանի և ՀԱԱՀ փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման գործողությունների ծրագրի կատարողականի մշտադիտարկում և հաշվետվություն ներկայացվել ռեկտորատի նիստին,
- գնահատել է համալսարանում ընդունվող կանոնակարգերի նախագծերը և առաջարկություններ ներկայացվել դրանց բարելավման ուղղությամբ,
- մշակել ՈԳԱ կենտրոնի աշխատակիցների պաշտոնների անձնագրերը,
- մշակել է ուսումնա-մեթոդական կենտրոնի և ՄՌԿ բաժնի ինքնավերլուծության չափանիշներն ու չափորոշիչները,
- մշակել է ՀԱԱՀ դասախոսների կարիքների գնահատման հարցաշարը:

ՈԳԱ կենտրոնը 2021 թ. ՄԿԾ-ների որակի ապահովման նպատակով՝

- ՀԱԱՀ ստացել է հավատարմագրում 4 տարի ժամանակով: Հավատարմագրման գործընթացի համակարգողը բուհում եղել է ՈԳԱ կենտրոնը:

- ՌՊ-ի համաձայն վերանայել է կրթական ծրագրերի ձևաչափը, արտոնման և մշակման, հաստատման մշտադիտարկման ու վերանայման փաստաթղթային հենքը:
- ՄԿԾ-ները ծրագրային հավատարմագրման նախապատրաստելու նպատակով ՈԳԱ կենտրոնը հանդես է եկել որպես հետևյալ 2 գործընթացների համակարգող՝
 1. հավատարմագրման չափանիշներին համապատասխան պիլոտային ինքնավերլուծությունների իրականացում
 2. ՄԿԾ-ների մշակում կամ բարելավում:
- ՄԿԾ-ների մշակմանը նախորդել է ՀՀ կառավարության չափանիշներով և չափորոշիչներով պիլոտային ծրագրային ինքնավերլուծությունը: ՈԳԱ կենտրոնը ստացել է 7 ինքնավերլուծություն (2021 թ. օպերացիոն պլանով նախատեսված էր ունենալ առնվազն 4-ը):
- Մեկնարկել է 16 ՄԿԾ-ների բարելավման կամ մշակման գործընթաց, որից 4-ը մագիստրոսական, 12-ը բակալավրիատի: ՈԳԱ կենտրոնը հանդես է եկել որպես այդ աշխատանքը համակարգող և խորհրդատվություն ապահովող կենտրոն: Ավարտված է 2-ական մագիստրոսական և բակալավրիատի ծրագիր: Յուրաքանչյուր ՄԿԾ –ի շրջանակում բենչմարքինգ է արվել 3-10 նմանատիպ ծրագրերի հետ: 2 ՄԿԾ-ներ վերանայվել են միջազգային ստանդարտներին համահունչ:
- ՈԳԱ կենտրոնի մշակված ծրագրով անցկացվեց ՀԱԱՀ 68 աշխատակիցների վերապատաստում «Ուսանողի գնահատում» թեմայով:
- ՈԳԱ կենտրոնի փորձագետների գործուն մասնակցությամբ մշակվել և ներդրվել է միջին մասնագիտական 1 դուստր ծրագիր, որը պիլոտային չափորոշիչ դարձավ «Գինեգործություն և խաղողագործություն» ՄԿԾ-ի համար:

- 2021 թ. փորձարկվեց մշտադիտարկման նոր մեխանիզմ՝ դասալսումների մշտադիտարկումը: Դասալսումները ցույց տվեցին, որ դասավանդման ժամանակակից ուսանողակենտրոն մեթոդների կողքին կան նաև դասախոսակենտրոն: Դրա հետ մեկտեղ դասավանդման ընթացքում երևաց ուսուցման ժամանակակից նոր մեթոդների և տեխնոլոգիաների կիրառման արդյունավետության դրական դինամիկան ինչը նախատեսված էր ՌՊ-ով:
- Դասախոսական աշխատանքում թույլ և ուժեղ կողմերի, հնարավոր բարելավումների ուղիները բացահայտելու համար, արվել է ուսանողի կողմից դասախոսի և ուսուցման մեթոդների գնահատում:

ՈԳԱ կենտրոնի կողմից հետագա բարելավումներ ուղղությամբ առաջարկների փաթեթ ներկայացնելու համար արվել են հետևյալ հետազոտությունները.

- Աշխատաշուկայի՝ ճարտարագիտական մասնագիտությունների նկատմամբ ունեցած պահանջարկի ուսումնասիրություն, որի ընթացքում հավաքագրվել է տեղեկատվություն մասնագիտական 5 ոլորտներից (ջրային ռեսուրսների, էներգետիկ ռեսուրսների, հողային, հանրային կառավարման ոլորտներ և կենսագործունեության անվտանգություն)
- Օտար լեզվի ուսումնառության պահանջարկի ուսումնասիրություն դասախոսների և ուսանողների շրջանում
- ՀԱԱՀ դասախոսների կարիքների և գիտական-մասնագիտական ակտիվության գնահատում:
- ՀԱԱՀ ամբիոնների վարիչների ֆորմալ և ոչ ֆորմալ ծանրաբեռնվածության գործոնների ուսումնասիրություն:

27.12.2021թ.

Լիլիթ Ջաքարյան,

ՈԳԱ կենտրոնի տնօրեն